

# Հաշմանդամության պատճառով խտրականություն հանրային և մասնավոր դպրոցներում

---

2019 թ. օգոստոս, հրատ.#7146.10 - Armenian

## I. Դաշնային և նահանգային օրենքներ հաշմանդամության պատճառով խտրականության մասին

Սահմանափակ կարողություններ ունեցող ուսանողներն ու դիմորդները պաշտպանված են հաշմանդամության վրա հիմնված խտրականությունից և ունեն դաշնային և նահանգային օրենսդրությամբ նախատեսված ողջամիտ հարմարություններից օգտվելու իրավունք:

Այս տեղեկատվական թերթիկը վերաբերում է միայն K-12 դպրոցներին: Բարձրագույն կրթության ոլորտում խտրականության վերաբերյալ հարցերի համար այցելեք DRC-ի բարձրագույն կրթության [տեղեկատվական թերթիկ](#).

- [Տեղեկատվություն հաշմանդամություն ունեցող ուսանողների կարգապահության վերաբերյալ](#)
- [Տեղեկատվություն առողջական լուրջ խնդիրներով ուսանողների իրավունքների մասին](#)
- [Ծաղրանքներ և ճնշումներ հաշմանդամություն ունեցող ուսանողների նկատմամբ](#)

- [Դպրոցի կողմից հաշվեհարդար](#)

Կան երկու տեսակի օրենքներ, որոնք ձեր երեխային պաշտպանում են հաշմանդամության պատճառով խտրականությունից՝ խտրականության մասին օրենքները և հատուկ կրթության մասին օրենքները: Հատուկ կրթության մասին օրենքները, ինչպիսին է «Հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մասին» օրենքը (Individuals with Disabilities Education Act, IDEA), պաշտպանում են հանրակրթական դպրոցների աշակերտներին և ապահովում նրանց անվճար պատշաճ հանրային կրթության (Free Appropriate Public Education, FAPE) իրավունքը: IDEA-ի և FAPE-ի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս SERR ձեռնարկի [Գլուխ 3](#):

Խտրականությունը կարող է ձևավորվել բազմաթիվ ձևերով, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող ուսանողներին բացառելը, նրանց անհավասար վերաբերմունք ցուցաբերելը, ոտնձգությունները, հաշվեհարդարը կամ ողջամիտ հարմարությունները չապահովելը: Խտրականության արգելքը վերաբերում է բոլոր դպրոցական ծրագրերին՝ թե՛ ակադեմիական, թե՛ ոչ ակադեմիական:

Ստորև բերված են տարբեր դաշնային և նահանգային օրենքներ, որոնք ուսանողներին պաշտպանում են խտրականությունից.

- 1. Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենք (Americans with Disabilities Act, ADA)**

ADA-ն արգելում է հաշմանդամության վրա հիմնված խտրականությունը: ADA II մասը վերաբերում է պետական սուբյեկտներին և ներառում է հանրակրթական դպրոցները: II մասի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել [այստեղ](#): ADA III մասը արգելում է բիզնեսի կամ «հասարակական հարմարությունների» խտրականությունը, ներառյալ՝ մասնավոր դպրոցները: ADA-ն չի ներառում կրոնական դպրոցները: III մասի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել [այստեղ](#):

- 2. Օրենք «Վերականգնման մասին» 504-րդ բաժին (Բաժին 504)**

504-րդ բաժինը արգելում է հաշմանդամության հիմքով խտրականությունը դաշնային ֆինանսավորում ստացող ցանկացած դպրոցի կողմից: Հանրային դպրոցների մեծ մասի վրա տարածվում է 504-րդ բաժինը, քանի որ դրանք ստանում են դաշնային ֆինանսավորում: Մասնավոր դպրոցները, որոնք դաշնային կառավարությունից ստանում են որևէ ֆինանսական աջակցություն, նույնպես գործում են սույն օրենքով: Մա ներառում է կրոնական դպրոցները, որոնք զուրկ են ADA օրենքով նախատեսված աջակցությունից:

### **3. Անռուի «Քաղաքացիական իրավունքների մասին» օրենք (Անռու)**

Անռուի օրենքը Կալիֆոռնիայի նահանգային օրենք է, որն արգելում է բիզնես-հաստատությունների, ներառյալ մասնավոր դպրոցների կողմից իրականացվող խտրականությունը, որը հիմնված է հաշմանդամության վրա: Արդյո՞ք կրոնական դպրոցը գործում է Անռուի օրենքով, կախված է նրանից, թե որքանով է այն ուսուցանում կրոնական ուսմունքը, կամ արդյո՞ք որոշակի կրոնական ուսանողների համար գործում են սահմանափակումներ:

### **4. Կալիֆոռնիայի կառավարության օրենսգիրք, 11135-րդ բաժին (Բաժին 11135)**

11135 բաժինը նման է 504-րդ բաժնին, բայց այն արգելում է ցանկացած պետական ֆինանսավորում ստացող ծրագրի կողմից խտրականությունը: Դա սովորաբար միշտ վերաբերում է հանրակրթական դպրոցներին: Եթե մասնավոր կրոնական դպրոցը նահանգային կառավարությունից որևէ ֆինանսավորում ստանա, ապա պետք է գործի սույն օրենքով, նույնիսկ եթե ազատված է Անռուի օրենքով:

### **5. Կալիֆոռնիայի կրթության օրենսգիրք, 220-րդ բաժին (Բաժին 220)**

220-րդ բաժինը նման է 11135-րդ բաժնին և արգելում է ցանկացած պետական ֆինանսավորում ստացող դպրոցական ծրագրի կամ գործունեության կողմից խտրականությունը: Այս օրենքում հստակ ներառված են այն դպրոցներն ու ուսանողները, որոնք ստանում են պետական ֆինանսավորում:

## II. Ողջամիտ հարմարություններ

Հաշմանդամություն ունեցող ուսանողներն ու դիմորդները կարող են հովանավորվող դպրոցից ցանկացած պահի պահանջել ողջամիտ հարմարություններ: Պահանջը կարող է ունենալ ցանկացած ձև, բայց ամենալավը հնարավորության դեպքում գրավոր դիմելն է: Պահանջը պետք է ներառի ձեր երեխայի սահմանափակ կարողությունների վերաբերյալ մանրամասներ, բուժող մասնագետի նամակը, որը բացատրում է երեխայի հաշմանդամությունը, և առաջարկներ այն հատուկ կացարանների վերաբերյալ, որոնք կարծում եք, որ հարմար կլինեն ձեր երեխայի համար: Մույն տեղեկատվական թերթիկի վերջում բերվում են ողջամիտ հարմարություններ պահանջելու և ապահովելու վերաբերյալ նամակների օրինակելի ձևեր:

Դաշնային ֆինանսավորում ստացող դպրոցները պետք է ունենան 504-րդ բաժնի համակարգող: Հարմարությունների վերաբերյալ պահանջները կարելի է ներկայացնել այդ համակարգողին: Այնուհետև 504-ի համակարգողը պետք է 30 օրվա ընթացքում նախատեսի հանդիպում ձեր և երեխայի ուսուցչի հետ՝ քննարկելու հավանական 504 ծրագիրը: Եթե դուք գտնվում եք մասնավոր դպրոցում, որը չի ստանում դաշնային ֆինանսավորում, բայց ընդգրկված է մեկ այլ օրենքով, կարող եք ձեր հայրը ներկայացնել տնօրենին:

Դպրոցներից պահանջվում է ստեղծել ողջամիտ հարմարություններ, քանի դեռ դա չի կարող բերել անհարկի ծանրաբեռնվածության կամ դպրոցի ծրագրի հիմնարար փոփոխության: Անհարկի ծանրաբեռնվածությունն իրենից ներկայացնում է զգալի դժվարություն կամ ծախսեր՝ հաշվի առնելով դպրոցի ընդհանուր բյուջեն:

Հարմարությունների նպատակը ձեր երեխային հավասար հնարավորություն ընձեռելն է՝ օգտվելու նույն արտոնություններից, որոնք վայելում են դպրոցի մյուս երեխաները: Ձեր երեխան պետք է հնարավորություն ունենա նույնքան հաջողակ լինելու, որքան մյուս երեխաները, բայց պարտադիր չէ, որ նրանք ունենան առաջադիմության նույն մակարդակը: Այս հնարավորությունը պետք է ապահովվի առավել ինտեգրված պայմաններում՝ երեխայի կարիքներին համապատասխան:

### III. Ի պաշտպանություն ձեր երեխայի

Եթե ձեր երեխայի դպրոցը հաշմանդամության պատճառով հրաժարվում է նրան հովանավորություն տրամադրելուց կամ ձեր երեխայի նկատմամբ այլ կերպ է խտրականություն դրսևորում, ապա դուք ընտանեկան բողոք, նահանգային կամ դաշնային վարչական բողոք կամ դատական հայց ներկայացնելու իրավունք ունեք:

#### 1. Ներքին բողոքներ

504-րդ բաժնի համաձայն՝ դաշնային ֆինանսավորում ստացող դպրոցը պետք է ունենա ընթացակարգեր այն ուսանողների համար, որոնք կարծում են, որ իրենց իրավունքները ոտնահարվել են: Այս ընթացակարգերը պետք է ներառեն պատշաճ գործընթացների ստանդարտներ և առաջարկեն բողոքների շուտափույթ լուծում: Եթե ցանկանում եք ներքին բողոք ներկայացնել ձեր դպրոցին, լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք դպրոցի 504-րդ բաժնի համակարգողին: Հիշեք, որ եթե ձեր բողոքը վերաբերում է խտրականությանը, ապա այն պետք է ներկայացվի վեց ամսվա ընթացքում՝ խտրականությունը տեղի ունենալու պահից կամ խտրականության մասին առաջին անգամ իմանալու օրվանից: Այս վեցամսյա ժամկետը կարող է երկարաձգվել շրջանի ղեկավարը, եթե պահանջում եք հիմնական երկարաձգում:

#### 2. Դաշնային վարչական բողոքներ

Քաղաքացիական իրավունքների գրասենյակ (Office of Civil Rights, OCR)

–

ԱՄՆ կրթության նախարարության Քաղաքացիական իրավունքի գրասենյակը (OCR) հետաքննում է դաշնային ֆինանսական աջակցություն ստացող դպրոցների խախտումները: Բողոքները OCR-ին պետք է ներկայացվեն խտրականությունից 180 օրվա ընթացքում, եթե արդեն չեք անցել ձեր դպրոցի ներքին բողոքների գործընթացը: Եթե դուք ավարտել եք ձեր դպրոցի ներքին բողոքների գործընթացը, ապա պետք է ձեր բողոքը OCR-ին ներկայացնեք դպրոցի որոշումից հետո 60 օրվա

ընթացքում: Դուք կարող եք OCR-ին բողոք ներկայացնելու մասին տեղեկատվություն ստանալ <https://www2.ed.gov/about/offices/list/ocr/index.html> կայքէջից կամ SERR ձեռնարկի [Գլուխ 6](#)-ից:

### Արդարադատության նախարարություն (Department of Justice, DOJ).

ԱՄՆ արդարադատության նախարարությունը (DOJ) հետաքննում է ADA-ի խախտումները:II մասի բողոքները (հանրային դպրոցների համար) պետք է ներկայացվեն խտրականությունից 180 օրվա ընթացքում:III մասի բողոքները (մասնավոր դպրոցների համար) կարող են ներկայացվել ցանկացած պահի: Ավելի լավ է ներկայացնել հնարավորինս շուտ, քանի որ ապացուցելը կարող է դժվարանալ ժամանակի ընթացքում:DOJ-ին բողոք ներկայացնելու մասին լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել այստեղ՝ [https://www.ada.gov/filing\\_complaint.htm](https://www.ada.gov/filing_complaint.htm)

### **3. Կալիֆոռնիայի վարչական բողոքները**

#### Արդար զբաղվածության և բնակարանային ապահովման դեպարտամենտ (Department of Fair Employment and Housing, DFEH).

Կալիֆոռնիայի կառավարության օրենսգրքի 11135-րդ բաժինը և Անտուի «Քաղաքացիական իրավունքների մասին» օրենքը գործադրվում են Կալիֆոռնիայի Արդար զբաղվածության և բնակարանային դեպարտամենտի կողմից (FEHA):Դուք կարող եք վարչական բողոք ներկայացնել DFEH-ին առցանց՝ <https://www.dfeh.ca.gov/complaint-process/file-a-complaint/> Բողոքները պետք է ներկայացնեք խտրականության դեպքից հետո մեկ տարվա ընթացքում:

#### Կալիֆոռնիայի կրթության վարչություն (California Department of Education, CDE).

Կալիֆոռնիայի կրթության վարչությունը (CDE) ուսումնասիրում է հանրակրթական դպրոցներում օրենքներին չհամապատասխանելու

մասին մեղադրանքները: Վարչությունը պետք է ուղղակիորեն միջամտի այն ժամանակ, երբ (1) առկա է ուղղակի ֆիզիկական վտանգ, (2) սպառնալիքի տակ է հայտնվում ուսանողի «առողջությունը, անվտանգությունը կամ բարեկեցությունը», 3) դպրոցը չի բավարարում համապատասխան ընթացակարգերի մասին օրենքները, (4) ուսանողը չի ստանում իր IEP ծառայությունները, կամ (5) դպրոցը խախտել է հաշմանդամություն ունեցող անձանց կրթության մասին օրենքը (Individuals with Disabilities Education Act, IDEA):

Բողոքը պետք է ներկայացվի ենթադրյալ խախտման պահից մեկ տարվա ընթացքում: Դուք կարող եք Կալիֆոռնիայի կրթության վարչությանը բողոք ներկայացնելու մասին տեղեկություններ ստանալ մեր SERR ձեռնարկի [Գլուխ 6](#)-ից կամ <https://www.cde.ca.gov/sp/se/qa/cmplntproc.asp> կայքէջից:

#### 4. Դատավարություն

Վերը քննարկված օրենքների խախտումները կարող են հարկադրաբար վերացվել նաև մասնավոր դատական գործերի միջոցով: Սահմանափակումների կանոնադրությունը կարող է սահմանափակել դատական հայց ներկայացնելու ժամկետները, և դուք կարող եք կորցնել բողոքելու հնարավորությունը, եթե չգործեք այդ ժամկետում: Այս ժամկետները կարող են կազմել խտրականության պահից հետո ընդամենը երկու տարի: Եթե դուք ցանկանում եք դատական գործ հարուցել, ապա պետք է հնարավորինս շուտ խորհրդակցեք փաստաբանի հետ:

Եթե դուք հայցում եք ավելի քան 10 000 ԱՄՆ դոլարի դրամական վնաս, մեկ այլ տարբերակ է խտրականության դեպքը Փոքր գումարի հայցապահանջների դատարանում ներկայացնելը: Կիրառվելու են վաղեմության ժամկետները: Դուք չեք կարող օգտվել փաստաբանի ծառայությունից, եթե դիմում եք փոքր գումարի հայցապահանջների դատարան: Այդ մասին կարող եք ավելի շատ տեղեկություններ գտնել այստեղ՝ <https://www.disabilityrightsca.org/publications/a-guide-to-small-claims-court-how-to-sue-if-a-business-or-landlord-discriminates>.

Եթե կարծում եք, որ ձեր երեխային վիրավորել են, և ցանկանում եք անձնական վիրավորանքի դեմ հայց հարուցել, գուցե հարկ լինի նախ ներկայացնել քաղաքացիական իրավախախտման մասին հայց:Քաղաքացիական իրավախախտման հայցը ներկայացվում է այն դեպքում, երբ ձեզ վիրավորող անձը պետական ծառայող է:Սովորաբար, վիրավորանքին վերաբերող հայցն անհրաժեշտ է ներկայացնել վիրավորանք հասցնելու պահից վեց ամսվա ընթացքում:Լրացուցիչ տեղեկություններ հասանելի են [այստեղ](#):

Եթե ձեզ օգնություն է հարկավոր Կալիֆոռնիայի հաշմանդամության իրավունքների շրջանակներից դուրս փաստաբան գտնելու համար, որպեսզի ձեր հայցը վարույթ ընդունվի, կարող եք զանգահարել Կալիֆոռնիա նահանգի փաստաբանների նշանակման ծառայության 1-866-442-2529 հեռախոսահամարով կամ այցելել նրանց առցանց <http://www.calbar.ca.gov/Public/Need-Legal-Help/Lawyer-Referral-Service>:

## **Նամակի օրինակելի ձև՝ խելամիտ հարմարություն պահանջելու համար**

[Ամսաթիվ]

Հարգելի [դպրոցը կամ 504-րդ համակարգողի անունը, եթե հայտնի է],

Ես գրում եմ՝ ակնկալելով ողջամիտ հարմարություններ իմ որդու / դստեր համար, [երեխայի անունը] իր հաշմանդամության / հաշմանդամությունների պատճառով:

Իմ երեխան [ուսանող է / դիմում է ուսանող դառնալու համար] [դպրոցի անվանումը]:Հաշմանդամության պատճառով նրան հարկավոր են հետևյալ հարմարությունները [թվարկել հարմարությունները]:

Իմ երեխայի [բժիշկը / հոգեբույժը / հոգեբանը / թերապևտը / սոցիալական աշխատողը / մասնագետ թերապևտը / այլ անհատներ (նկարագրեք)] նշել է այն հարմարությունները/ փոփոխությունները, որոնք անհրաժեշտ են նրա հաշմանդամության պարագայում:Կից ներկայացվող գրություն՝ [բժշկի կամ մասնագետի անունը]:



Դաշնային և նահանգային օրենքները պահանջում են, որ K-12 դպրոցները ողջամիտ հարմարություններ տրամադրեն հաշմանդամություն ունեցող ուսանողներին և դիմորդներին: Խնդրում ենք պատասխանել այս դիմումին մինչև [ամսաթիվը]: **Ջարգեր** ունենալու դեպքում ազատորեն դիմեք ինձ [ձեր հեռախոսահամարը և (կամ) էլեկտրոնային փոստի հասցեն]: **Ծնորհակալություն:**

Հարգանքներով՝

[Ձեր անունը]

[Ձեր հասցեն]

## Աջակցության նամակի օրինակելի ձև

[Ամսաթիվ]

Հարգելի [դպրոցը կամ 504-րդ համակարգողի անունը, եթե հայտնի է],

Ես [անունով] [բժիշկ / հոգեբույժ / հոգեբան / թերապևտ / սոցիալական աշխատող/ աշխատանքային թերապևտ] եմ և ծանոթ եմ նրա վիճակին:[Նա] ունի հաշմանդամություն, որն առաջացնում է որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ:Այս սահմանափակումները ներառում են [թվարկել ֆունկցիոնալ սահմանափակումները, որոնք պահանջում են անհրաժեշտ հարմարությունները]:

[Պահանջվող հարմարությունը] անհրաժեշտ է, որպեսզի [Անունը] [դիմի / ունենա ծառայություններից և շահերից օգտվելու հավասար իրավունքներ] [դպրոցի անվանումը]:[Նկարագրեք, թե ինչպես հարմարությունը կօգնի անհատին]:Շնորհակալ եմ [Անուն]-ի համար այս ողջամիտ հարմարությունն ապահովելու համար:

Հարգանքներով`

[Անունը և պաշտոնը]